29151
5-/34

891.99
Ф-25

ԱՒԵԱՋԻՆ ԳՐՔԱՒԿ

ՓԱՍԱՔԱՆԻ ՄՕՏ

ՎՕՂԳՎԻ, 1 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,

Փոխադրեց ռսերէնից

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՅԻՆԵԱՆՑԻ

1901

[illegible]

[illegible]

5652 [illegible] 2

[illegible]

891.99
Կ-25
-6 NOV 2011

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ

ԿԱՄ

ԵՐՔԱՆԻԿ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ՎՕԴԵՎԻԼ ՄԻԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Փոխադրեց ռուսերէնից

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ

1901
4129

Настоящій водевиль, подъ загл. „У АДВОКАТА“ разрѣшенъ Г. Помощникомъ Главноначальствующаго въ представленію на сценахъ края. Декабря 7 дня, 1895 г. Тифлисъ.

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՈՍՏԻՆՅԵՆՑԻ
1901

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

NOV 2011
4927

Доз. цензурою, Тифлисъ, 19 Апрѣля 1901 г.

ԻՒՐ ԱՆԳԻՆ

ԶԱԽԱԿ

ԶՕԼԱՅԻՆ

ՀԱՅՐԱԿԱՆ ՄԻՐՈՎ ՆՈՒԷՐ

ՓՈԽԱԴՐՈՂՔՑ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՊԼԱՏՈՆ ԲԱԺԱՆՈՂԵԱՆ.—*երիտասարդ փաստաբան։*
ՊՕՂՈՍ ԷԱՏԱՂԵԱՆ.—*ծերունի։*
ՄԱՐԹԱ ԿԱՏԱՂԵԱՆ.—*նրա կինը։*
ՆԻԿՈԼ ՇԼՈՐԵԱՆ.—*փաստաբան, Պլատոնի ընկեր։*
ՄԱՐՕ ՆԱԶԵԱՆ.—*ջահէլ տիկին։*
ՕՍԷՓ ԲԱԼԹԻԿԵԱՆ.
ԿՕԿՕՐ ՊԵՏՐՈՎԻՉ ԶԱՐՈՒԲԱՆՈՎ.
ԴԱՍՊԱՐ.—*Պլատոնի ծառայ, զազախեցի։*

Անցքը պատահում է Թիֆլիսում, մեր ժամանակ։

Սոյն վոդեվիլը առաջին անգամ ներկայացրել է Թիֆլիսի հայոց դերասանական ընկերութիւնը 1896 *թուի յունուարի* 11-*ին վրաց ազնուականների թատրոնում, տիկ.* Վ. ՄԷԼԻՔԵԱՆԻ *բենեֆիսին։*

ՓԱՍՏԱՐԱՆԻ ՄՈՏ ԿԱՄ ԵՐԶԱՆԻԿ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

Տեսարանը ներկայացնում է Պլատոն Բաժանողեանի զարդարուած կաբինէտը։ Մէջ տեղը, աջ ու ձախ կողմերում դռներ։ Գրասեղանը իւր պարագաներով, վրան բազմաթիւ գրքեր, թղթեր, լրագիրներ և այլն։ Մի կողմ դրուած է գրքերի պահարան, միւս կողմ թուղթ խաղալու սեղան, բազմոց և բազկաթոռներ։ Ցերեկ է։

ՏԵՍԻԼ Ա.

ԳԱՍՊԱՐ ԵՒ ԲԱԼԹԻԿԵԱՆ

ԳԱՍՊԱՐ. (*Գրասեղանի վրայ ցրուած գրքերը դարսում է*)։ Ես իմ Աստծը, որ ըշխարքմս ատվակատուլթենի պէս լաւ փէշակ չկայ. իմ աղէն ոչ քրտնը՛մ ա, ոչ ցըմաքըմ, համա էն զադար փոր ա վեկալնըմ, որ եթէ մի սէլ ածես, սէլը տակին կը կոտրի։ Շատ լաւ լեզու ունի, շատ, կրակ ա, էլի, կրակ. էնա դիւանխանէն ա մտնըմ, մի էրկու խօսք ա-

սըմ թէ չէ, գործը ձեռաց տանըմ, է գոլէն ա դնըմ, թէկուզ հէնց աւազակութին արած ըլես, թողըմ չի, որ բերդը տանեն քեզ։ Շատ հալալ, աշխատիվեր մարդ ա, ամա, ինչ տնես, որ կնիկն իրան ու գէօրա չի. անիծածը թամամ խլէզ ա, էլի, խլէզ. էհ, շատ անբաղդութին ա, շատ։ Դէ, դու ասա, հալալ մարդ, ջահել տղա, խլէզ կնիկ, եանի սազըմ ա։ Կընիկն էլ ըլի, մեր գեղի զուռնաչի Թորոսի կնկայ պէս—ոտը պէ՞նդ, ձեռը պէ՞նդ, ուսերը հաստ, ջանը սաղ, ցորնով լիքը ջվալը շլակըմ՝ տակին հէնց թռչըմ ա, որ կասես թէ ազրէյիլ ըլի. ամա աղիս խլէզն իլանըմ ա, որ սա մովարիցն էլա մի ըստաքան չայ ածի։ Ուրիշներն ասըմ են աղէս կաշառ ա վեկալնըմ, էնդուր ա սհենց հարուստ. դրուստ են ասում թէ կաշառքը մուրթը տեղը լիս կտայ, համա ինձ որ հարցնես, ոչ մի լիս չեմ ուզիլ, միան թէ՝ միշտ կողքիս վարդի պէս սիրուն աղջկերք ունենամ։ Աղէս, ինչ անըմ ա, անըմ, թող ասեն, միան թէ՝ սիրուն աղջկերք տեսնելու ու... սիրելու կողմից շատ բաղդաւոր ա. օր չի անցկենըմ, որ մոտը լաւ լաւ կընանիք չգան. «ատվակատ ա, կնիկը մարդիցը բաժանելու զակունը լաւ գիտայ», ասըմ են,

տուն թափւում ու պռոշները մեղրի պէս լը-
պրզտում։ Ղօրթա, խլէզ աղջիկ պարոնս բար-
կանում, քաջկոտում ա ու հետը լղար որցակի
պէս կռիւը տալի, ամա աղէս ագահ չի դը-
նում, էլի իրանն ա քշում։ Պա՛հ, պա՛հ, պա՛հ
օխնըւածի տղէն թամամ օձի լեզու ունի.
օձի. կնկանը ձեռաց խաբում ա։ Ա՜յ ատվա-
կատուրթի՜ն. կնիկն՝ ինչքան ՝կուզէ թող ծըվ-
ծըվայ, տուտգիպօպօզի տայ, բերանը բաց
ա անում թէ չէ, ջորու աքացիների պէս վրա
ա տալիս խօսքերն ու էլի խլէզ աղջիկ պա-
ռոնիս մեղաւոր դուս բերում...

ԲԱԼԹԻԿԵԱՆ. (*Դռնից գլուխը ներս է կոխում*)։ Ներողութիւն, պարոն, կինս հո՛ այդ տեղ չի՞ եկել։ (*Իսկոյն ծածկւում է*)։

ԳԱՍՊԱՐ. Վա՛հ... էս խեղճ մարդն էլ միշտ կնկայ ետևիցն ա մանգալիս, վայ ջանս քե համար դուս գայ, հա՛...։

ՏԵՍԻԼ Բ.

ԳԱՍՊԱՐ ԵՒ ԲԱԺԱՆՈՂԵԱՆ

ԲԱԺԱՆՈՂԵԱՆ. (*Հանդարտ կերպովներս է մտնում պօրտֆէլը ձեռքին*)։ Գասպար, տիկինը զարթնեց։

ԳԱՍՊԱՐ. Գիդե՛մ չեմ։

ԲԱԺԱՆՈՂ. Իմ մասին քեզ բան հարցրեց։

ԳԱՍՊԱՐ. Ո՛նց չէ, հարցրեց, սաղ քշերը քնե՛ց ոչ. քու ճամփէն էր պահում։

ԲԱԺԱՆ. Յետոյ դու ի՞նչ ասեցիր։

ԳԱՍ. Ի՞նչ որ սովրեցրիք, ը՛նէնց ը՛սացի։

ԲԱԺԱՆՈՂ. Շատ բարկացա՞ւ։

ԳԱՍՊԱՐ. Էնպէս բարկացաւ, որ բերնից կրակ թափեց. ամա մի բան էլ, աղա՛, գի՛տես քեզ ինչքան անրծե՛ց։

ԲԱԺԱՆ. Այժմ ես իմ սեանեակը կը մըտնեմ և եթէ կինս քեզ բան հարցնի, կասես թէ ուշ վերադարձաւ տունն և խսկոյն քնեց։

ԳԱՍՊԱՐ. Հրաման քեզ, աղա, կասեմ, ամա գիտամ, որ հաւատալ չի. էդթաւուր սըտերին սովորեց, հըմի դու պէտք ա ուրիշ բան փիքը անես։

ԲԱԺԱՆ. Այո՛, յիշեցի, կասես թէ իրի-

գուն դատարանում նիստ են ունեցել և առաւօտեան ժամը 6-ին եկաւ տուն, այդպէս որ ասես կը հաւատայ։

ԳԱՍՊԱՐ. Դրան էլ չի հաւատալ, գ՛ուր ա։

ԲԱԺԱՆ. Չի հաւատա՞յ։ Թող ջանը դուրս գայ և այնպէս հաւատայ։

ԳԱՍՊԱՐ. Ես իմ Աստծը, հախն ա, որ ջանը դուս գայ։

ԲԱԺԱՆ. Լաւ, գնա՛, ինչպէս ասեցի այնպէս կասես, չմոռանաս։ (*Ներսից լսւում է Բաժանողեանի կնոջ, Աննայի ձայնը*).

«ԱՆՆԱ. Գասպա՛ր, աղէն չեկա՞ւ։

ԳԱՍՊԱՐ. Ա՛ղա, սկսեց, սկսեց...

ԲԱԺԱՆ. Լռիր, վերցրու այս իմ վերարկուն և գլխարկն ու տար միւս սենեակը, շուտ արա. (*Աննայի ձայնը* «Ա՜յ տղայ, չե՞ս հասկանո՞ւմ, Գասպար, աղէն չեկա՞ւ»)։

ԲԱԺԱՆ. Ասա, եկաւ։

ԳԱՍՊԱՐ. (*Շփոթուելով*)։ Ասա էկաւ։

ԲԱԺԱՆ. Ցիմար, անասուն։ (*Աննայի ձայնը*. «Ինչ ես դուրս տալիս, յիմար»)։

ԳԱՍՊԱՐ. Աղջիկ պարոն, ասեցի էկաւ։ (*Աննայի ձայնը*. «Շատ ժամանակ է ինչ որ եկել է»)։

ԳԱՍՊԱՐ. Հրմի էկաւ։

ԲԱԺԱՆ. Դուրս կորիր, յիմար, ինչպէս մոռացար խօսքերս։

ԳԱՍՊԱՐ. (*Դնալով*)։ Ինչ անեմ, ուղա, վախիցս լեզուս կապուեց։ (*Դուրս է գնում*)։

ԲԱԺԱՆ. (*Մենակ*)։ Հաւատացնում եմ սարսափելի բան է ունենալ պառաւ կապիկ կին և յիմար ծառայ։ Հիմա պիտի լսէք թէ կինս ինչ բաներ կասի։ (*Նմանեցնում է կնոջ ձայնին*). «Ո՞ւր էիր», «Ո՞ւմ մօտ էիր», «ե՞րբ եկար», «ի՞նչ անխիղճ ես», «ի՞նչ դժբախտ եմ», «անասնուածՀ», և այլն և այլն։ Թփու, Աստուած անիծի։ Անդադար բարկանում է ու անիծում թէ ինչու միշտ իրա կողքին չեմ նստում։ Ի՞նչ յիմարութիւն է միշտ նրա կողքին նստած մնալ, քանի որ նրան նայելը ինձ զզուանք է պատճառում։ Երբ տուն եմ մտնում կարծում եմ թէ իմ առաջ սատանան է կանգնած, ասացէք խնդրեմ, ի՞նչ տեսնելու բան է, հա՛։ Փու, սատանան տանի։ (*Մտնում է Գասպարը*)։

ՏԵՍԻԼ Դ.

ԳԱՍՊԱՐ, ԲԱԺԱՆՈՂԵԱՆ ԵՒ ՆԱԶԵԱՆ

ԳԱՍՊԱՐ. Ա՛ղա, մի կնիկ ա եկել քեզ հարցնում ա։

ԲԱԺԱՆՈՂ. Ո՞վ է այդ տիկինը։

ԳԱՍՊԱՐ. Գիտում չեմ, ասում ա ատվակատ Բաժանողովին եմ ուզում։

ԲԱԺԱՆ. Ազգը հարցրէ՞ր։

ԳԱՍՊԱՐ. Ազգը Նազեան ա։

ԲԱԺԱՆ. Զարմանալի ազգ, ինքը գեղեցիկ է։

ԳԱՍՊԱՐ. Հրաման քեզ, ա՛ղա Ջան։ (*Ժրաստալով*)։ Շատ սիրուն հիւրուփարին ա՛, որ ըրեսին մտիկ եմ տալի, խելքս ուզում ա թէ գնա՛յ։

ԲԱԺԱՆ. Խնդրիր, խնդրիր ներս գայ, իսկ դու ուշք դարձրու աղջիկ պարոնիդ, որ ներս չմտնի թէ չէ արդէն գիտես թէ ինչ օլին կը սարքի։

ԳԱՍՊԱՐ, Բաշուստա, ա՛ղա Ջան, գիդամ, ինչպէ՞ս չգիդամ։ (*Դուրս է գնում*)։

ԲԱԺԱՆ. Տեսնենք ով է այդ Նազեանը, Գասպարը թէև յիմար է, բայց լաւ ճաշակ

ունի։ Զարմանալի է, այսպէս վաղ ինչ գործ պիտի ունենայ ինձ հետ։ (*Մտնում է Նազեան*)։

ՆԱԶԵԱՆ. (*Անհամեստաբար մտնում է, կոկիկ հագնուած, մեծ գլխարկով, ղէմքը գեղեցիկ է եւ ծիծաղկոտ, խօսելիս ամաչում է եւ միշտ ժպտում*)։ Փաստաբան Պլատոն Բաժանողեանը դուք էք։

ԲԱԺԱՆ. Այո՛, տիկին, ես եմ, ինչ էք կամենում։

ՆԱԶԵԱՆ. (*Ամաչելով եւ ժպտալով*)։ Ես... ճշմարիտ... ամաչում եմ, դուք այնպէս երիտասարդ էք և այնպէս... ներողութիւն, Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆՈՂ. (*Ժպտալով*)։ Ոչինչ, տիկին, ոչինչ, փաստաբանից և բժշկից ամենևին չը-պիտի ամաչել, համեցէք խնդրեմ, նստեցէք։ (*Մատնցնում է աթոռ*)։

ՆԱԶԵԱՆ. (*Չի նստում*)։ Շնորհակալ եմ, չգիտեմ ինչպէս սկսեմ... Ձեր մասին ասում են, որ դուք երևելի փաստաբան էք, մանաւանդ ամուսնական խնդիրներում։

ԲԱԺԱՆ. Այո՛, այդ իմ արհեստն է, հրամայեցէք, ինչով կարող եմ ձեզ ծառայել։

ՆԱԶԵԱՆ. Օ՜... դուք շատ բանով կա-

բող էք ինձ օգնել... պիտի ասեմ, որ ես ամուսնացած եմ և թէև իմ ամուսինը լաւ և բարի մարդ է, բայց... Աստուած վկայ, ամաչում եմ...

ԲԱԺԱՆ. Ո՛չ, ինչից էք ամաչում, շարունակեցէք խնդրեմ։ (*Առանձին*)։ Ի՞նչ գեղեցիկ է։

ՆԱԶԵԱՆ. Ես ուզում եմ ամուսնուցս բաժանուել։ Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Ո՛չ, ինչից էք ամաչում, դա սովորական բան է։ Ուրեմն դուք կամենում էք ձեր ամուսնուց բաժանուել, շատ բարի, երեւի բաժանուելու համար հարկաւոր պատճառներ ունէք։

ՆԱԶԵԱՆ. Բանն էլ այդ է, որ հարկաւոր պատճառներ չունեմ, ամուսինս բարի և երեւելի մարդ է։

ԲԱԺԱՆ. Հապա ինչու էք բաժանւում։

ՆԱԶԵԱՆ. Նրա համար որ... նրա համար որ... (*Ժպտալով*)։ Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Ո՛չ, տիկին, ամաչելու ոչինչ չկայ։

ՆԱԶԵԱՆ. Նրա համար եմ ուզում բաժանուել, որովհետև ուրիշին եմ սիրում։ (*Ժպտ-*

տալով եւ գլուխը կախ գցելով)։ Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Ուրիշին էք սիրում։ Շատ լաւ, բայց բաժանուելու համար այդ իրաւացի պատճառ չէ։

ՆԱԶԵԱՆ. Մի թէ։

ԲԱԺԱՆ. Հաւատացնում եմ։ Եթէ ուրիշին էք սիրում, այդ նշանակում է որ ձեր ամուսնուն չէք սիրում։

ՆԱԶԵԱՆ. Ո՛չ, պարոն փաստաբան, ո՛չ, ամուսնուս սիրում եմ, բայց ոչ այնպէս ինչպէս նրան...

ԲԱԺԱՆՈՂԵԱՆ. Նրա՞ն, ումը՞։

ՆԱԶԵԱՆ. (*Կոկէտ կերպով եւ ժպտալով*)։ Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Ինչից էք ամաչում, ասացէք, ասացէք։ (*Առանձին*)։ Ի՛նչ հրաշալի է։

ՆԱԶԵԱՆ. (*Կակազելով*)։ Ես... սիրում եմ... մի ջահել աֆիցերի... այնպէս գեղեցիկ է, այնպէս փոքրիկ բեղեր ունի, ինչպէս դուք։

ԲԱԺԱՆ. (*Առանձին*)։ Այս լաւ նշան էր։ (*Նրան*)։ Յետո՞յ։

ՆԱԶԵԱՆ. Եւ յետոյ, որ իմանաք թէ ինչ ճարպիկ է. ինչ կոկիկ, ինչ ուրախ, շատ հիանալի պարում է և երգում, իսկ զրուցա-

բանութիւնը, դրա մասին էլ մի հարցնէք։

ԲԱԺԱՆ. (*Խօսքը կտրելով*)։ Մի խօսքով հոգեակ է էլի։

ՆԱԶԵԱՆ. (*Ծիծաղելով*)։ Այո՛, ճիշտ էք ասում, ուղիղ հոգեակ է, հոգեակ։

ԲԱԺԱՆ. Ուրեմն ձեր մարդուց նրա համար էք բաժանւում, որովհետև նա հոգեակ է, այնպէս չէ՞։

ՆԱԶԵԱՆ. Այո՛, հէնց նրա համար։ (*Ժպտալով*)։ Աստուած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Ի՞նչ էք ասում, ինչ կայ ամաչելու, յետոյ ինչո՞ւ էք սպասում, ինչո՞ւ չէք բաժանւում։

ՆԱԶԵԱՆ. Բայց որ չգիտեմ թէ ինչպէս բաժանուեմ։

ԲԱԺԱՆ. Դրանից հեշտ ինչ կայ, դուք մի կողմ գնացէք, իսկ ձեր ամուսինը՝ միւս կողմ։

ՆԱԶԵԱՆ. Այդ քան էլ հեշտ չի եղել, Սաշան ասեց թէ այդ դէպքում հարկաւոր են ինչ-որ օրէնքների յօդուածներ։ Բայց ես ոչ օրէնքներ և ոչ յօդուածներ գիտեմ, ես բոլորովին անփորձ եմ... (*Ժպտալով*)։ Աստուած վկայ ամաչում եմ։ Օգնեցէք ինձ, պ. փաս-

տաբան, մի որևէ միջոց, կամ ճանապարհ ցոյց տուէք։

ԲԱԺԱՆ. Մեծ ուրախութեամբ, եթէ իմ ցոյց տուած ճանապարհով կը գնաք և կընդունէք խորհուրդս։ Իմ կարծիքով բաժանուելը բոլորովին հարկաւոր չէ։

ՆԱԶԵԱՆ. Հապա ինչպէս, ինչ միջոց կայ ուրիշ։

ԲԱԺԱՆ. Այնպէս արէք ինչպէս ձեր նըմանները անում են, բոլորովին մի՛ բաժանուէք ձեր ամուսնուց, եղէք այնպէս ինչպէս մինչև հիմա եղել էք, ամուսնուդ հետ էլ տպրեցէք և ձեր հոգեակ Սաշային էլ սիրեցէք...։ Այդպիսով թէ ձեր ամուսինը երջանիկ կը լինի և թէ ձեր հոգեակ Սաշան։

ՆԱԶԵԱՆ. Ի՞նչ էք ասում, ինչպէս կարելի է, ամօթ է, Սաշան այդպէս չի ուզում, այլ նա ասում է. կամ բոլորովին իմս եղիր, կամ ամուսնուդ։

ԲԱԺԱՆ. Բայց դուք երկուսին էլ ուզում էք, այնպէս չէ։

ՆԱԶԵԱՆ. (*Ծպտալով*)։ Այո՛, Աստուած վկայ ամաչում եմ, բայց Սաշան չի համաձայնում, ասում է, անպատճառ իմս պիտի լինես։ Բացի դրանից նրանց ջորագուդը տեղա-

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI — 1922

փոխուում է ամարանոց և Սաշան մենակ չի կարող գնալ, ես էլ ուզում եմ նրա հետ գնալ, բայց մինչև չբաժանուեմ մարդս չի թողնիլ...

ԲԱԺԱՆ. Ինչու էք ձեր մադուն հարցնում, վերկացէք և գնացէք ձեր Սաշայի հետ։

ՆԱԶԵԱՆ. Բայց չէ որ յետոյ մարդս կը նեղանայ։

ԲԱԺԱՆ. Ի հարկէ կը նեղանայ։

ՆԱԶԵԱՆ. Ես էլ այդպէս եմ կարծում, ես ուզում եմ այնպէս բաժանուել ամուսնուցս, որ եթէ Սաշան ինձանից ձեռք վերցնի, այն ժամանակ դարձեալ վերադառնամ ամուսնուս մօտ...։ Ես շատ անփորձ եմ։

ԲԱԺԱՆՈՂ. Այո, երևում է որ անփորձ էք, բայց միջոցը լաւ էք իմացել։ Հաւատացնում եմ զարմանալի ցանկութիւն էք ունեցել, եթէ բաժանուելը չէք ուզում, ինչու էք բաժանւում, և եթէ ուզում էք, կրկին ինչու էք վերադառնում մարդու մօտ։

ՆԱԶԵԱՆ. Բայց ով գիտէ, ինչպէս կը փոխուի մարդու դրութիւնը... Սաշայի եկամուտը միմիայն ռոճիկն է, աւելի ոչինչ չունի, իսկ մարդուս...

ԲԱԺԱՆ. Այո, այժմ հասկացայ, ձեր ամուսնու գրպանը չէք կարողանում թողնել և

Սաշային էլ էք ցանկանում, այնպէս չէ։

ՆԱԶԵԱՆ. Այո։ (*Ժպտալով*)։ Աստուած վկայ ամաչում եմ...

ԲԱԺԱՆ. Հանգստացէք, ես ամեն ինչ կասեմ ձեզ... այդ հեշտ բան է... այո, ասեցէք խնդրեմ դուք որտեղ էք բնակւում։

ՆԱԶԵԱՆ. Այդ ի՞նչ հարկաւոր է ձեզ։

ԲԱԺԱՆ. Գործի համար, տիկին, գործի համար։

ՆԱԶԵԱՆ. Ես բնակւում եմ Սօլօլակ։

ԲԱԺԱՆ. Ե՞րբ կարելի է ձեզ տանը մենակ գտնել։

ՆԱԶԵԱՆ. Ի՞նչ հարկաւոր է այդ։

ԲԱԺԱՆ. Գործի համար, տիկին, գործի համար անպատճառ հարկաւոր է։

ՆԱԶԵԱՆ. Ինձ կարող էք տանը մենակ տեսնել ամեն օր ժամի 11-ից մինչև 3-ը։

ԲԱԺԱՆ. Շատ լաւ, ես կը գամ ձեզ մօտ և ամեն բան կը լաչողեցնեմ։

ՆԱԶԵԱՆ. Արդեօք թանկ կը նստի այդ գործը, շատ փող է հարկաւոր։

ԲԱԺԱՆ. Ի՞նչ էք հրամայում, ես ձեզանից ոչ մի կոպէկ էլ չեմ վերցնի։

ՆԱԶԵԱՆ. Շնորհակալ եմ, արդէն յուսով եմ, որ մարդուցս կարող եմ այնպէս բա-

ժանուել, ինչպէս ես եմ ցանկանում, այնպէս չէ։

ԲԱԺԱՆ. Այսինքն կը բաժանուէք և յետոյ նորից կը միանաք, դրանից հետո ինչ կայ, ես ամեն բան կը յաջողեցնեմ։

ՆԱԶԵԱՆ. Շատ կը պարտաւորեցնէք, շնորհակալ եմ, ցտեսութիւն։

ԲԱԺԱՆ. Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. Ուրեմն անպատճառ տանը կը սպասեմ ձեզ, Սաշային էլ իմաց կը տամ որ գայ։

ԲԱԺԱՆ. Սաշան ի՞նչ հարկաւոր է։

ՆԱԶԵԱՆ. Ինչպէս ձեր կամքն է։ (*Դընալով*)։ Անպատճառ կը սպասեմ, ցտեսութիւն։

ԲԱԺԱՆ. Անպատճառ կը գամ։

ՆԱԶԵԱՆ. (*Ցետ է դառնում*)։ Այո՛, օրէնքներն ու յոդուածները չմոռանաք։

ԲԱԺԱՆ. Ո՛չինչ չեմ մոռանայ, օրէնքներն էլ հետս կը բերեմ։

ՆԱԶԵԱՆ. (*Ժպտալով*)։ Ցտեսութիւն։

ԲԱԺԱՆ. (*Ժպտալով*)։ Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. (*Դռնից*)։ Ցտեսութիւն։

ԲԱԺ. Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. (*Ցնտ է դառնում*)։ Այո՛, խընդրում եմ գաղտնիքս ոչ ոքի չյայտնել։

ԲԱԺԱՆ. Ի՞նչ էք հրամայում, տիկին, ումը պիտի յայտնեմ։

ՆԱԶԵԱՆ. Շատ ամօթ է եթէ իմանան։ (*Ծիծաղելով*)։ Ամուսնած վկայ ամաչում եմ։

ԲԱԺԱՆ. Անհոգ եղէք, ամեն բան այնպէս կը կարգադրեմ, որ ոչ ոք չիմանայ ձեր խորհուրդը։

ՆԱԶԵԱՆ. Շնորհակալ եմ, ցտեսութիւն (*Գնում է*)։

ԲԱԺԱՆ. Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. (*Ցնտ է դառնում*)։ Այո՛, քիչ էր մնում մոռանայի, արդեօք չկա՞յ այնպիսի օրէնք, որի զօրութեամբ ամուսինը իրաւունք ունենայ տանից արտաքսելու իւր կնոջը։

ԲԱԺԱՆ. Ինչպէս չէ, կայ։

ՆԱԶԵԱՆ. Ուրեմն, ամուսինս որ ինձ տանից արտաքսէ, այն ժամանակ ես ինչ անեմ։

ԲԱԺԱՆ. Ոչինչ, յետոյ դուք կարող էք իրեն ներողութիւն խնդրել և նա ձեզ կը ների։

ՆԱԶԵԱՆ. Միթէ՞, իմ մարդը շատ թուլասիրտ է, ամեն խնդիրքս կատարում է, մինչև հիմա ոչ մի խնդիրքս չի մերժել։

ԲԱԺԱՆ. Աւելի լաւ, ուրեմն այդ դէպքումն էլ չի մերժի և դարձեալ կընդունի ձեզ իւր մօտ։

ՆԱԶ. Ուրեմն, ցտեսութիւն։ (Գնում է)։

ԲԱԺԱՆ. Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. (Ցետ դառնալով)։ Ներողութիւն, դարձեալ մի բան պիտի հարցնեմ, ճիշտ է ամուսինս թէև շատ բարեսիրտ է, բայց ինչ և իցէ գուցէ այլ ևս իւր մօտ չընդունէ, այդ դէպքում որևէ օրէնք, կամ յօդուածք չգիտէք։

ԲԱԺԱՆ. Օրէնքներից և յօդուածներից աւելի ի՞նչ գիտեմ։

ՆԱԶԵԱՆ. Եթէ կայ այնպիսի օրէնք, որի զօրութեամբ մարդը իրաւունք ունի իւր կնոջը տանից արտաքսելու, ես կարծում եմ, որ այնպիսի օրէնք էլ կը լինի, որի զօրութեամբ կինը իրաւունք ունենայ պահանջելու մարդուց, որ իրեն դարձեալ ընդունէ։

ԱԺԱՆ. Ինչպէս չէ, այդպիսի օրէնք էլ կայ։

ՆԱԶԵԱՆ. Իհարկէ, թէ մէկը կայ, միւսն էլ պիտի լինի։ Չէ որ անարդարացի կը լինէր, եթէ կինը մարդուց բաժանուելուց յետոյ յետ դառնալու իրաւունք չունենար։

ԲԱԺԱՆ. Անկասկած մեծ անիրաւութիւն կը լինէր։

ՆԱԶԵԱՆ. (*Ծիծաղելով*)։ Ես բոլորովին չեմ տեսել ձեզ նման հմուտ փաստաբան, ամեն օրէնք իմացել էք։

ԲԱԺԱՆ. Ո՛չ էլ ինձ է պատահել ձեզ նման կլիէնտակ։

ՆԱԶԵԱՆ. (*Ծիծաղելով*)։ Միթէ։

ԲԱԺԱՆ. Հաւատացնում եմ։

ՆԱԶԵԱՆ. Շատ ուրախ եմ, ուրեմն ցը-տեսութիւն։

ԲԱԺԱՆ. Ցտեսութիւն։

ՆԱԶԵԱՆ. (*Ցատ դառնալով*)։ Ներողութիւն, ներողութիւն... Աստուած վկայ ամաչում եմ, ներողութիւն։ Արդեօք ոչինչ չմոռացայ ձեզ հարցնել։

ԲԱԺԱՆ. Զգիտեմ... յիշեցէք, գուցէ դարձեալ բան ունէք ասելու։

ՆԱԶԵԱՆ. Չեմ կարծում, ամեն ինչ հարցրի, այժմ ցտեսութիւն, ցտեսութիւն։ (*Ծիծաղելով դուրս է գնում*)։

ԲԱԺԱՆՈՂ. Ցտեսութիւն, ցտեսութիւն։ (*Ձեռքով հեմքոյը է ուղարկում*)։ Ո՞հ, որքան գեղեցիկ է այս տիկինը, այնքան էլ յիմար է։ Շատ յիմար կին տեսել եմ, բայց այդ տե-

սակին դեռ չեմ հանդիպել։ Ինչպէս էք հաւանում, հա, ուզում է և բաժանուել և նորից միանալ։ Օրէնքներից և յօդուածներից այնքան է հասկանում, որքան ես չինարէնը։ Այն ինչ որ Սաշա-Մաշա է, ես շուտով կը հեռացնեմ դրանից և այն ժամանակ ոչ բաժանուել է հարկաւոր և ոչ միանալը։ (*Մտնում է Գասպարը*)։

ՏՆՍՀԼ. Դ.

ԳԱՍՊԱՐ, ԲԱԺԱՆՈՂԵԱՆ ԵՒ ՇԼՕՐԵԱՆ

ԳԱՍՊԱՐ. (*Մտնում է*)։ Այդ, Շլօրենց Նիկօլն էկաւ։

ԲԱԺԱՆ. Ներս հրաւիրիր։ (*Մտնում է Շլօրեանը։ Գասպարը դուրս է գնում*)։

ՇԼՕՐԵԱՆ. Իրիգուն ես և Աղէքսանդր Իվանիչը ժողովարանում մինչև գիշերուայ ժամի երեքը սպասեցինք, ուզում էինք բանկ խաղալ։ Բայց այդ թողնենք, ասա խնդրեմ այն ով էր որ հիմայ քո սանդուխտներից իջնում էր։

ԲԱԺԱՆ. Յիմարութեան խդէալ թէ ուզում ես հէնց նա է։ (*Այդ մինչոցին Օսէփ*

Բալթիկեանը գլուխը ներս է կոխում)։

ՕՍԷՓ. Ներողութիւն, պարոններ, կինս հօ այստեղ չէ՞ եկել։ (*Ոսկոյն ծածկւում է*)։

ՇԼՕՐԵԱՆ. (*Զարմացած*)։ Այս ո՞վ է։

ԲԱԺԱՆ. Զգիտեմ ճշմարիտ, ձանձրացած եմ դրանից, բնակարանս սովորել է և ամեն օր չորս անգամ գլուխը դռնից ներս է կոխում և միշտ իւր կնոջն է փնտռում։ (*Լրսում է Աննայի ձայնը։ «Պլատօն, Պլատօն, եկար»*)։

ԲԱԺԱՆ. (*Վախենալով*)։ Վա՜հ, այժմ ինչ անեմ, բոլորովին մոռացայ, Նիկօլ, ի սէր Աստուծոյ, օգնիր, արդէն նրա բնաւորութիւնը քեզ յայտնի է, ինձ կը խեղդի, եթէ չասեմ թէ իրիգուն ո՞ւրտեղէի։

ՇԼՕՐԵԱՆ. Ինչպէս երևում է իրիգունը տանը չես եղել, այնպէս չէ։

ԲԱԺԱՆ. Զարմանում եմ քեզանից, տանը ինչ պիտի անէի, ամբողջ գիշեր քէֆ էինք անում։

ՇԼՕՐԵԱՆ. Աֆերիմ տղամարդութեանդ, ա՛յ մարդ, կնոջ տէր, Ի՞նչ գործ ունէիր կէս գիշերին դուրսը։

ԲԱԺԱՆ Է՛Հ, կատակ մի՛ անիր, կնոջս կասես թէ՞ իրիգուն դատարանում նիստ կար և

ժամի 6-ին վերադարձայ տուն...։ Քեզ կը հաւատայ։ Զմոռանաս ինչ որ ասեցի։ (*Աննայի ձայնը՝ «Պլատօն, ո՞ւր ես»*)։ Այ, սատանան տանի քեզ, գալիս եմ, գալիս եմ։ (*Այդ միջոցին ներս է վազում Կոկօր Պետրովիչ Զարուբանով, ղէմքը արիւնոտ աչքերը կապտած, մինչդեռ կուլիսներում լսւում է Դասպարի եւ Զարուբանովի կռուի ձայնը. «Թող», «չեմ թողնի», «չի կարելի», «թո՛ղ, թո՛ղ, ասում եմ», «չի կարելի»։*

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ ԵՒ ԶԱՐՈՒԻՒԱՆՈՎ

ԶԱՐՈՒԻՒԱՆ. (*Բարկացած*)։ Փաստաբանը որտե՞ղ է, Փաստաբանը։

ՇԼՈՐԵԱՆ. Այս ի՞նչ գազան է։

ԶԱՐՈՒԻՒ. Փաստաբանը դո՞ւք էք։

ՐԱԺԱՆ. Այո՛, ես եմ։

ԶԱՐՈՒԻՒ. (*Ցոյց է տալիս աչքը*)։ Այս ինչ է։

ՐԱԺԱՆ. (*Զարմացած*)։ Աչք է։

ԶԱՐՈՒԻՒ. Գիտեմ որ աչք է, բայց ինչպիսի աչք է։

ԲԱԺԱՆ. Ինչպիսի աչք պիտի լինի, սովորական աչք է։

ԶԱՐՈՒԻ, Ուրեմն դուք աչքեր չէք ունեցել, կոյր էք եղել։

ԲԱԺԱՆ. Դիժ է այս մարդը՝, ինչ էք ուզում։

ԶԱՐՈՒԻ. Ինչ եմ ուզում, միթէ ինձ վերայ ոչինչ չէք նկատում։

ԲԱԺԱՆ. Ինչպէս չեմ նկատում, ձեզ լաւ ջարդել են։

ԶԱՐՈՒԻ. Բանն էլ այդ է որ ջարդեցին, բայց գիտէք թէ ինձ ով ջարդեց։

ԲԱԺԱՆ. Ես ինչ գիտեմ, զահլէս տարաք էլի։

ԶԱՐՈՒԻ. Զահլա էլ կը տանեմ և հոգիդ էլ կը հանեմ։

ԲԱԺԱՆՈՂ. Ինչպէս, ինչ իրաւունքով, դուք ով էք։

ԶԱՐՈՒԻ. Ով եմ, ուրեմն չէք ճանաչում։

ԲԱԺԱՆ. Այս ինչ լիմար մարդ է, ես ձեզ առաջին անգամն եմ տեսնում։

ԶԱՐՈՒԻ. Թէև առաջին անգամն էք տեսնում, բայց այնուամենայնիւ պարտական էք ինձ ճանաչելու։ Ես եմ Կոկոր Պետրովիչ Զարուբանով։

ԲԱԺԱՆ. Ի՞նչ, Զահրումարով։

ԶԱՐՈՒԻ. Զահրումարովն էլ դու ես ու Սարսադովն էլ, ասում եմ Կոկոր Պետրովիչ Զարուբանով, դելիստվիտելնի սատատկի սովետնիկ Կոկոր Պետրովիչ Զա-բու-բա նով։

ԲԱԺԱՆ. (*Շլոբեանին*)։ Ո՞վ է այս լիմարի գլուխը,

ԶԱՐՈՒԻ. Ձեր լուացքն ով է անում։

ԲԱԺԱՆ. Մեր սպիտակեղէնը մի կինն է լուանում։

ԶԱՐՈՒԻ. Իսկոյն ասեցէք այն կնոջ անունը, ասեցէք շուտով։

ԲԱԺԱՆ. Մարֆուշկա։

ԶԱՐՈՒԻ. Յետոյ գիտէք ով է այդ Մարֆուշկան։

ԲԱԺԱՆ. Ես ի՞նչ գիտեմ։

ԶԱՐՈՒԻ. Մարֆուշկան իմ կինս է։ Ուսի աղջիկն է. . ասեցին թէ աշխատասէր աղջիկ է, կար է անում, բանում է, հանգիստ ու խելօք աղջիկ է, ես էլ լիմարացայ և ամուսնացայ նրա հետ, բայց ի՞նչ, նա ոչ թէ կին է, այլ սատանայ է, գև է և տարտարոս։ Ամեն օր ինձ ծեծում է։ Հիմա հօ տեսնում էք։ (*Ցոյց է տալիս աչքը*)։

ԲԱԺԱՆ. Այո՛, տեսնում եմ, շատ ցաւալի բան է, բայց ինձ ինչ։

ՁԱՐՈՒԻ. Դուք փաստաբան էք և երևելի փաստաբան, բաժանեցէք ինձ կնոջից։

ԲԱԺԱՆ. Սխալւում էք, ես այդպիսի գործեր չեմ ընդունում, դիմեցէք ուրիշին։

ՁԱՐՈՒԻ. Այստեղից ոտս էլ դուրս չեմ դնի, մինչև որևէ ճանապարհ ցոյց չտաք ինձ։

ԲԱԺԱՆ. Այ դու յիմարի գլուխ, այդ ինչ իմ բանն է, ես ինչ ճանապարհ ցոյց տամ։

ՁԱՐՈՒԻ. Պիտի բաժանէք, անպատճառ ինձ պիտի կնոջից բաժանէք։

ԲԱԺԱՆ. Ես ինչպէս բաժանեմ ձեզ ձեր կնոջից, ես կօնսիստորեան եմ թէ կամիզիկոս։

ՁԱՐՈՒԻ. Անպատճառ դուք պիտի մեզ միմիանցից բաժանէք, հակառակ դէպքում ուրիշը չի կարող։ Դուք փաստաբան էք և բաժանելը ձեր արհեստն է։

ԲԱԺԱՆ. (*Շլօրեանին*)։ Այս յիմարը չի ուզում այստեղից հեռանալ։

ՇԼՕՐԵԱՆ. Դուք ինչ-որ Զարուբանով էք թէ Զատրումարով, ինչու էք բաժանւում ձեր կնոջից աւելի լաւ է երբ նա ձեզ ծեծի, դուք առանց խնայելու այնքան հասցրէք գլխին, որ հոգին դուրս գայ

ԶԱՐՈՒԻ. Ուրեմն ծեծեմ և հոգին հանեմ, էլի։

ԲԱԺԱՆ. Ուզում էք մինչև անգամ սպանեցէք ձեր կնոջը, միայն թէ հեռացէք այստեղից։

ԶԱՐՈՒԻ. Ինչպէս թէ հեռանամ, շառլատաններ, կինտոներ, աւազակներ, ձեր փաստաբանութիւնը յիմարութիւն է, դուք մարդկանց խաբում էք։

ԲԱԺԱՆ. (*Աղաղակում է*)։ Դասպար, Դասպար։ (*Ներս է վազում Դասպարը*)։ Վզին տալով դուրս վռնդիր սրան այստեղից։

ԶԱՐՈՒԻ. Ինչպէս թէ վռնդել, ես ինքս կը գնամ, բայց դուք ոչ թէ փաստաբաններ էք, այլ խորամանկ ազուէսներ և շառլատաններ։ (*Դասպարը խփում է նրա վզին, վռնդում եւ հպարտութեամբ դուրս է գնում*)։

ԲԱԺԱՆ. Ա՛յ, Աստուած անիծի ձեզ, այս օր այս ի՞նչ զարմանալի մարդիկ են գալիս ինձ մօտ, այն անիծեալը գազանի էր նմանում։ (*Լսում է Աննայի ձայնը. «Պլատօն, ուր ես, ինչքան ժամանակ է սպասում եմ քեզ»*)։ Դա էլ Աստծոյ պատիժ է էլի, ճշմարիտ եմ ասում, ես կը գժուեմ։ Գալիս եմ, գալիս եմ, այժմ գնամ իմ կնոջը տես-

նեմ, թէ չէ, Զահրումարովի պէս իմ քէթն ու պռունգն էլ կը ջարդի։ Զմռռանաս Նիկոլ, ինչպէս ասեցի այպէս կը վարուես, եթէ կինս բան հացնի քեզ։ (*Աննայի ձայնը. «Պլատօն, Պլատօն»*)։ Ա՛յ, չոռ ու ցաւ, գալիս եմ, գալիս եմ հոգեակս, գալիս եմ։ (*Դուրս է գընում*)։

ՇԼՕՐԵԱՆ. Ահա երջանիկ ամուսիները հէնց սրանք են. (*Ցանկարծ ներս է վազում Մարթա Կատաղեանը*)։

ՑԵՍԻԼ Զ

ՇԼՕՐԵԱՆ, ՄԱՐԹԱ ԿԱՏԱՂԵԱՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԲԱԺԱՆՈՂԵԱՆ

Մ. ԿԱՏ. (*Խօսքեր կարկտի նման թափում է, աղմուկ է բարձրացնում եւ միշտ շփոթում*)։ Փաստաբան Բաժանողեանը դուք էք, ձեր մասին շատ գովասանքներ եմ լսել, երևակայեցէք իմ դժբախտութիւն։

ՇԼՕՐԵԱՆ. Ներողութիւն տիկին...

Մ. ԿԱՏ. Մի խանգարէք, ես շատ եմ ատում երբ խօսքս կտրում են։ Երևակայեցէք թէ ինչ է իմ դրութիւնը։

ՇԼՕՐԵԱՆ. Տիկին...

Մ. ԿԱՏ. (*Բարկանալով*)։ Մի խանգարէք ասում եմ, խօսքս մի կտրէք, երևակայեցէք իմ մարդը ինձ ինչ է ուզում անել, ուզում է բաժանուել, հասկանում էք ուզում է բաժանուել ինձանից։

ՇԼՕՐԵԱՆ. Տիկին, ես եմ...

Մ. ԿԱՏ. Գիտեմ, գիտեմ, թէ դուք ով էք, դուք փաստաբան էք, մի մեծ բան չը կարծէք ձեր գլուխը...։ Հա, այն էի ասում, մարդս ուզում է ինձանից բաժանուել, ինչո՞ւ չէք հարցնում պատճառը։ Ասացէք խնդրեմ, միթէ ես այնպիսի կին եմ, որ մարդս ուզենայ ինձանից բաժանուել։

ՇԼՕՐԵԱՆ. Տիկին...

Մ. ԿԱՏ. Ասում եմ մի խանգարէք։ Դուք դարձեալ ձերն էք կրկնում, ասում եմ մարդս, ամուսինս ուզում է ինձանից բաժանուել, յետոյ ինչո՞ւ, նրա համար որ ես ուրիշ կնիկների նման լօբի ու հնդուհաւ չեմ, ես սիրում եմ որ ամեն բան կարգ ու կանոնով լինի, իմանում էք թէ ոչ։

ՇԼՕՐԵԱՆ. (*Առանձին*)։ Ա՛յ, Աստուած անիծի, ջորու աքացիների պէս վրայ է թափում խօսքերը։

Մ. ԿԱՏ. Ես ձեզ հարցնում եմ, դուք իբրև փաստաբան դատեցէք, մթթէ սա արդարութիւն է, որ մարդս ուզում է ինձանից բաժանուել։

ՇԼՕՐԵԱՆ. Տիկին սխալւում էք։

Մ. ԿԱՏ, Ինչպէս թէ սխալւում եմ։ (*Բարկացած*)։ Բէսաբ նամաղուլ էք անում, դուք ինքներդ էք սխալւում և գլուխն էլ քարին էք տալիս։ Ասում է սխալւում էք, ասեցէք ինձ, ինչի՞ մէջն եմ սխալւում, հա...

ՇԼՕՐԵԱՆ. Տիկին, ախար, ինձ էլ թոյլ տուէք մի խօսք ասելու... օհ, այս ինչ տարօրինակ կին է, տնաքանդը ջրաղացի անուի պէս պտտւում է։ Տիկին, դուք սխալւում էք, ես այն մարդը չեմ ումը որ կարծում էք։ (*Ներս է մտնում Բաժանողեանը*)։ Փաստաբան Բաժանողեանը ահա սա է, դիմեցէք սրան, թնչ էք ուզում ինձանից։

Մ. ԿԱՏ. Մինչև այժմ ինչո՞ւ չասեցիք։

ՇԼՕՐԵԱՆ. Ուզում էի ասել, բայց չթողեցիք որ մի խօսք գոնէ բերանից դուրս թողնէի։

Մ. ԿԱՏ. Ինչպէս թէ չթողեցի, խնդրեմ ձեզ այդքան թոյլ չտաք։ (*Բաժանողեանին*)։ Ուրեմն դո՞ւք էք փաստաբան Բաժանողեանը։

ԲԱԺԱՆ. Այո՛, ես եմ, ինչ էք կամենում։

Մ. ԿԱՏ. Պարոն փաստաբան, ձեզ պիտի յայտնեմ, որ ձեր այս ընկերը, թէ հիւրը անխելք և անկիրթ մարդ է։

ԲԱԺԱՆ. Ներողութիւն տիկին, գործի մասին խօսեցէք։

Մ. ԿԱՏ. Իհարկէ գործի մասին եմ եկել և ոչ թէ դադարկ զրոյցի... երևակայեցէք, ամուսինս ուզում է ինձանից բաժանուել։

ԲԱԺԱՆ. Ուզում է բաժանուել։

Մ. ԿԱՏ. Մի խանգարէք, խօսքս մի կտրէք։ Հա, այն էի ասում, ամուսինս ուզում է ինձանից բաժանուել։

ԲԱԺԱՆ. Իչո՛ւ, ինչ պատճառով։

Մ. ԿԱՏ. Բանն էլ հէնց այդ է, որ բոլորովին առանց պատճառի է բաժանւում։ Ամուսինս ասում է իբր թէ ես շատ կատաղի և բարկացկոտ եմ, իբր թէ սիրում եմ շատ խօսել և բղաւել, իբր թէ ինձ մօտ ապրելը անկարելի է և այլն։ Ասացէք խնդրեմ, դա ինչ բանի նման է, հա՛։ Մի՞թէ կարելի է այդպիսի խայտառակութիւն։

ԲԱԺԱՆ. Ոչինչ չեմ հասկանում, հանգիստ խօսեցէք, տիկին, ինչ էք կամենում ինձանից։

Մ. ԿԱՏ. Ինչպէ՞ս թէ ինչ եմ կամենում, այն եմ կամենում, որ ամուսինս ինձ մօտ ապրի իբրև օրինաւոր ամուսին... թէ չէ, ասեցէք խնդրեմ, ինչ բանի նման է, պաշտօնից վերադառնում է թէ չէ, իսկոյն փակւում է առանձնասենեակում, ոչ ճաշէ է ուտում, ոչ ինձ հետ խօսում, իսկ միասին ապրելու մասին էլ քան մի՛ հարցնէք։

ԲԱԺԱՆ. Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։

Մ. ԿԱՏ. Ես էլ այդ եմ գանգատւում, ասում է թէ «քեզ հետ ապրել չեմ կարող, շատ կատաղի, բարկացող և շատախօս կին ես»։ Իսէր Աստուծոյ, ասացէք ինձ, մի՞թէ ես այնպիսի կին եմ որ ինձ մօտ ապրելը անկարելի լինի՞։

ԲԱԺԱՆ. Ես ինչ գիտեմ, տիկին, միթէ՞ ես ձեր մարդն եմ։

Մ. ԿԱՏ. Ինչպէս թէ իմ մարդն էք, ինչպէս էք համարձակւում ինձ անարգել։ Ձեր գործի մասին խօսեցէք և ոչ թէ լիմարութեան մասին։

ԲԱԺԱՆ. Ինչ է կատաղում այս լիմարը։ Տիկին փոքր ինչ համբերութիւն ունեցէք և ձեր չափը ճանաչեցէք։

Մ. ԿԱՏ. Ի՞նչ ասել է չափ և համբե-

բութիւն, ես չեմ կարող համբերել, լոբի, կամ հնդուհաւ չեմ որ համբերեմ... դարձեալ խնդրում եմ ձեզ, պ. փաստաբան, գտէք որևէ միջոց, որի զօրութեամբ մարդս ինձ հետ այդպէս չվարուի։

ԲԱԺԱՆ. Դարձեալ կրկնում եմ համբերութիւն ունեցէք, համբերութիւն։

Մ. ԿԱՏ. Է՛լի համբերութիւն, ինչքա՞ն է պէտք այդ դարշելի համբերութիւնը։

ՇԼՕՐԵԱՆ. Ինչպէս տեսնում եմ ձեր ամուսինը ձեր առաջ բոլորովին մեղաւոր չի եղել։

Մ. ԿԱՏ. Լռեցէք, ես ձեզ հետ չեմ խօսում, դուք ձեր գործը տեսէք։ (*Բաժանողմանին*)։ Ինքներդ դատեցէք, պարոն փաստաբան, միթէ դա օրէնք է, գիտէք մարդս մի անգամ ինձ ինչ արաւ, չեմ կարողանում երևակայել... Ինչ որ բան ասեցի, խաբելով դուրս տարաւ, դուռը ետևիցս պինդ կողպեց և ամբողջ գիշեր տուն չթողեց, ինչքան աղաղակեցի, բղաւեցի, դուռը ինչքան թակեցի, բայց ոչինչ չօգնեց, վերջապէս մի կերպ դուռը կոտրեցի, ներս վազեցի մարդուս մօտ, բայց երևակայեցէք իմ զարմանքս, մարդս պատուհանից դուրս էր փախել և ամբողջ գիշեր

տուն չեկաւ, ոչ էլ միւս օրը եկաւ, այսօր երրորդ օրն է չի երևում, մթթէ սա ամուսնութիւն է, ոչ, ես չեմ կարող համբերել, կամ նա պիտի լինի, կամ ես։

ԲԱԺԱՆ. Ուրեմն բաժանուեցէք ձեր մարդուց։

Մ. ԿԱՏ. Ինչպէ՞ս թէ բաժանուեմ. ուրեմն դուք ինձ ծաղրում էք, ամուսնուցս բաժանուեմ, որ ամբողջ աշխարհի ծաղրածու և մատով ցոյց տալու առարկայ դառնամ... ինչ իրաւունքով դուք ինձ այդպիսի խորհուրդ էք տալիս։

ԲԱԺԱՆ. Ներողութիւն, տիկին, ներողութիւն, ես ձեզ վիրաւորական ոչինչ չասեցի։

Մ. ԿԱՏ. Լսեցէք, մի՛ խանգարէք, ես շատ եմ ատում երբ խօսքս կտրում են, կարծում էք թէ բացի ձեզանից ուրիշ փաստաբան չկայ, շատ էք սխալւում։ (*Ներս է մտնում Պողոս Կատաղեան*)։

ՏԵՍԻԼ Է.

ՆՐԱՆՔ, ՊՕՂՈՍ ԿԱՏԱՂԵԱՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԳԱՍՊԱՐ

ՊՕՂՈՍ ԿԱՏԱՂ. (*Մարթային չի նկատում*)։ Փաստաբան Բաժանողեանը այստեղ է կենում։

ԲԱԺԱՆ. Այո՛, ես եմ։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. (*Նկատում է իւր ամուսնուն*)։ Ա... ա... ա... ես էլ քեզ էի որոնում, այստեղ ինչ գործ ունես, ինչո՞ւ ես եկել լիմար անասուն, երեք օր ո՞ւր էիր կորած, ո՞ւր էիր ասա՛։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. Ո՛հ, Աստուած իմ։ (*Ուզում է փախչել*)։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Ո՞ւր ես փախչում, ո՞ւր, ուզում ես էլի ձեռքիցս դուրս պրծնել, հա՛, մօտեցիր այստեղ, մօտեցիր, պատասխանիր ինձ, ո՞ւր էիր այս երեք օր։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. (*Վախեցած*)։ Քեզ էի փնտռում, սիրելիս, աղաւնեակս։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Սուտ ես խօսում, դու խոզի ձագ, գլուխդ քարն ես տալիս, ինչո՞ւ պիտի ինձ փնտռէիր, քանի որ միշտ տանն էի

և քեզ էի սպասում, այ դու օձի ծնունդ։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. (*Փաստաբանին*)։ Օգնեցէք ինձ, պարոն փաստաբան, ազատեցէք ինձ այս գազանից։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Իմ ինչ... ասում է ազատեցէք, ես քեզ ցոյց կը տամ, յիմար, հնգու�աւ, լօբի ուտող, տանը կը տեսնես թէ ինչ կանեմ քեզ։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. (*Բաժանողեանին*)։ Պարոն փաստաբան, ի սէր Քրիստոսի, մի կերպ օգնեցէք ինձ, սա ինձ համար ոչ թէ ամուսին է, այլ ցաւ է, ժանդախտ է, խօլերայ է, սա ինձ համար ոչ թէ կին է, այլ դժոխք է, խղճացէք ինձ պ. փաստաբան, բաժանեցէք ինձ այս կրակից, էլ չեմ կարող համբերել, սա իմ կենքս դառնացրեց, մաշեց, հոգիս հանեց, խեղդեց, էլ կենդանի չեմ սրա ձեռքին։ Խնդրում եմ, աղաչում եմ, պ. փաստաբան, ազատեցէք ինձ...

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Ա՛յ դու գարշելի օձ, չէս ամաչում ուրիշ մարդկանց մօտ ինչեր ես դուրս տալիս գլխիցդ, դուրս կորիր այստեղից, շուտ գնա՛ տուն։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. Չեմ գնայ։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Ինչպէս թէ չես գնա,

քեզ հրամայում եմ։ (*Բռնում է ձեռքից*)։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. Գնանք, բայց գիտենաս որ ինձ ջրի մէջ կը խեղդեմ։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Սուտ ես խօսում։ (*Քարշ տալով*)։ Գնանք, ասում եմ, գնանք։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. Կը գնամ, բայց գիտենաս որ ինձ կը սպանեմ։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Սուտ ես խօսում, գնանք։ (*Դուրս են գնում*)։

ԲԱԺԱՆ. Սատանան տանի ձեզ, այս ինչ տեսակ մարդիկ են, Նիկօլ, ինչպէս ես հաւանում, ինչքան խօսեց, ինչքան դուրս տուաւ, բայց խղճում եմ այդ մարդուն այդպիսի կնոջ ձեռքին։

ՇԼՕՐԵԱՆ. Եղբայր, դու ինձ խորհուրդ ես տալիս ամուսնանալ, բայց երևակայիր դրութիւնս եթէ կինս այդպիսի լինի, չէ որ յետոյ ես էլ ինձ պիտի խեղդեմ։

ԲԱԺԱՆ. Ճիշտ որ այդպիսի կին մարդուն կը թշուառացնի, ինչ մարդ կարող է դիմանալ այդպիսի կրակին։

ԲԱԼԹԻԿԵԱՆ. (*Դռնից գլուխը ներս է կոխում*)։ Ներողութիւն՝ պարոն, կինս հօ այդտեղ չէ։ (*Իսկոյն ծածկւում է*)։

ՇԼՕՐԵԱՆ. Ի՞նչու այդ մարդը միշտ իւր

կնոջն է որոնում, գուցէ դա էլ երջանիկ ամուսիններից լինի։

ԲԱԺԱՆ. Լսելեն որ փաստաբան եմ և ամեն մի աւանակ ինձ մօտ է գալիս։ Սատանան տանի դրանց ամուսնութիւնը և դրանց կեանքը։ (*Աղաղակելով*)։ Գասպար, Գասպար։ (*Մտնում է Գասպարը*)։ Ոչ ոքի ներս չթողնես։ Դուռը պինդ կողպիր և ամենքին ասա՛ թէ տանը չէ։ Ոչ ոքի ներս չթողնես, հասկանում ես, ոչ ոքի։

ԳԱՍՊԱՐ. Շատ լաւ, ոչ ոքի ներս չեմ թողալ, ամա, աղա ջան, աղջիկ պարոնը նեղանըմ ա, ասըմ ա՝ աղէդ խի՞ չի կեալի։ Ա՛ղա, նրա օթախը մտէք, թէ չէ, դալմաղալ կը սարքի, հու գիտէք, որ խասեաթով նա թիւնդ քացախ ա։

ԲԱԺ. Լաւ, գնա՛ և ասա, ես իսկոյն գալիս եմ։ (*Գասպարը դուրս է գնում*)։ Նիկօլ, այստեղ սպասիր, միասին կը գնանք «Թիլի-Պուճուրի ճաշարանը», այս օր ճաշին իմ հիւրն ես։

ՇԼՕՐԵԱՆ. Շատ լաւ, կը սպասեմ, միայն թէ շուտով ազատիր գլուխդ, թէ չէ դարձեալ ներս կը թափուեն երջանիկ ամուսիններից և ինձ կը գզգզեն։

ԲԱԺԱՆ. Մի վախենար, ես իսկոյն կը գամ։ (*Դուրս է գնում*)։

ՇԼՕՐԵԱՆ. Ահա այս է երջանիկ ամուսնութիւնը, այս տնաքանդներին ով է գժուացնում, իսկի չէք կարող երջանիկ ամուսին գտնել, ամեն տեղ կռիւ, դալմաղալ, պահ, պահ, պահ։ Աստուած ազատի կնոջից։ Ընկերս ստիպում է որ ամուսնանամ, ասացէք խնդրեմ, այսպիսի դէպքեր տեսնողը ինչպէս ամուսնանայ։ (*Մօտենում է եւ դռնից ականջ դնում*)։ Ահա բարձր ձայնով սկսեցին խօսել, Պլատօնը փաղաքշանքներ է անում։ Կինը բարկանում է, ահա տրտունջներ սկսեցին։ Պլատօնը տխրեց, նա էլ է բարկանում, սպասիր, սպասիր, գործը վատ ընթացք ստացաւ։ Էհէ, այդ լաւ բան չէ, ձեռքերով սկսեցին խօսել, վատ դրութեան մէջն է իմ փաստաբանը։ (*Լսում է սարսափելի աղմուկ, ամանները կոտրելու ձայնը։ Աննան աղաղակում է.* «Ա՛յ, քեզ, անխիղճ»։ *Պլատօնի ձայնը.* «Ա՛յ կին, գժուել ես, ինչ ես անում»։ *Աննա.* «Այս էլ քեզ»)։ Այժմ արդէն գործը խառնուեց, օգնութեան հասնեմ թէ չէ միմիանց կը սպանեն։ (*Դուրս է գնում սենեակ։ Լսում է երկարատեւ աղմուկ եւ ապակիներ կոտրտելու*

ձայնը: Աննայի ձայնը. «Այ դուք անխիղճներ»: *Պլատոնի ձայնը.* «Օգնեցէք, օգնեցէք»: *Ամենքի ձայները միմեանց հետ խառնուում են եւ սկսում է սարսափելի աղմուկ):*

ԲԱԺԱՆ. (*Սենեակից դուրս է վազում, կոտրած ճակատով, խառնուած մազերով, պատռած սիւրտուկով եւ երեսը արիւնոտ*): Բռնեցէք այդ գժին, բռնեցէք, թէ չէ ինձ կը սպանի: Դա ոչ թէ կին է, այլ սատանի ծնունդն է: (*Դուրս են շպրտում փայտեր, գրքեր, ամանների կտորտանքներ եւ այլն*): Դուռը կողպեցէք, Նիկոլ, դուռը, Գասպար, դուռը կողպիր, դա ոչ թէ կին է, այլ գազան է, գազան: (*Մտնում է Շլօրեանը, աչքը կապտած, նրա ետեւից գալիս է Գասպարը արիւնոտ դէմքով*): Քեզ էլ դիպաւ:

ՇԼՕՐԵԱՆ. (*Բարկանալով ծածկում է աչքերը*): Դիպաւ և այդպէս, տեղն է ինձ, ինչու օգնեցի, ինչ իմ բանն էր:

ԳԱՍՊԱՐ. Ո՞ւֆ, ինձ էլ լաւ հասցրեց: (*Դէմքին քսում է ձեռքը*): Դրուստ որ ասեմ, ուղա չան, ըռէխմռէխս չլիզդան ջարգեց:

ԲԱԺԱՆ. Դուրս կորիր, յիմար, բոլորը քո մեղն է, չէիր կարող դուռը ժամանակին կողպել:

ԳԱՍՊԱՐ. Շուտ ոնց կողպէի, որ մաջալ չէր տալի, ինչոր ձեռն էր ընկնում, թօփի գիւլլէքի պէս վրէս էր շպրտում։

ԲԱԺԱՆ. Դուրս կորիր, անասուն։ (*Գասպարը դուրս է գնում*)։ Նիկօլ, ներողութիւն, ով կը մտածէր թէ նա այդպէս կը կատաղէր։

ՇԼՕՐԵԱՆ. Ի սէր Քրիստոսի հեռանանք այստեղից թէ չէ ներս կը գայ և բոլորիս կը կոտորի։

ԲԱԺԱՆ. Գնանք, գնանք, վերարկուս և գլխարկս դուրս բերեմ։ (*Փնտռում է։ Այդ միջոցին ներս է մտնում Պօղոս Կատաղեանը*)։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՐԱՆՔ ԵՒ ՊՕՂՈՍ ԿԱՏԱՂԵԱՆ

ՊՕՂՈՍ ԿԱՏ. (*Վախեցած դողում է*)։ Պ. փաստաբան, ի սէր Աստուծոյ, մի տեղ թագցրէք ինձ, ազատեցէք կնոջից։

ԲԱԺԱՆ. Թողէք ինձ, հեռացէք գլխից, ես ինքս փախչում եմ կնոջից։

ՊՕՂՈՍ ԿԱՏ. Հապա ուր գնամ։

ԲԱԺԱՆ. Ուր որ ուզում էք այնտեղ գնացէք, ուզում էք ջհանդամը գնացէք, միայն թէ հեռացէք ինձանից։

ՊՕՂ. ԿԱՏ. Ուրեմն, դուք էլ ինչ փաստաբան էք։

ԲԱԺԱՆ. Խելագարուել էք, ինչ է, որովհետև ես փաստաբան եմ, ուրեմն գլխիս պիտի նստէք։ Ձշմարիտ զարմանալի է, ես ինքս ինձ չեմ կարողանում օգնել։ Ֆու՛ Աստուած անիծի ով որ ամուսնանայ։ Վերջապէս ասում եմ հեռացէք գլխից։ Նիկոլ գնանք։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՐԱՆՔ, ՄԱՐԹԱ ԿԱՏԱՂԵԱՆ, ՆԱԶԵԱՆ ԵՒ ԶԱՐՈՒԲԱՆՈՎ

ՄԱՐԹԱ ԿԱՏ. (*Ներս է վազում, Պօղոս Կատաղեանը թագնուում է Շլօրեանի ետեւը*)։ Որտեղ է իմ ամուսինը, պ. փաստաբան, երևի դուք խորհուրդ էք տուել, որ բաժանուի ինձանից... ես ցոյց կը տամ թէ ինչպէս պիպիտի բաժանուել։ Դուք խղճմտանք չունէք։

ԲԱԺԱՆ. Տիկին, մի՛ մոռանաք որ իմ տանն էք, կրկնում եմ, մի՛ մոռանաք։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Մի՛ խանգարէք, խօսքս մի կտրէք։

ԲԱԺԱՆ. Տիկին, խնդրում եմ հեռացէք

այստեղից, այժմ մենք ձեզ համար ժամանակ չունենք։

ՄԱՐԹԱ. ԿԱԿ. Ի՞նչ, հեռանամ, ներողութիւն, բոլորովին, ես այստեղից չեմ հեռանայ։ Մարդս ուզում է ինձանից բաժանուել և ես այստեղից հառանամ, ներեցէք խնդրեմ, այդ անկարելի է։

ԲԱԺ. Ա՜խ, այս ինչ ցաւ է։

ՄԱՐԹԱ. ԿԱՏ. (*Շլօրեանին*)։ Դուք դատեցէք, ի՞նչ բանի նմանէ, հա՛. որ այս պարոնը մեզ ամուսիններիս բաժանում է։

ՇԼՕՐԵԱՆ. Ես որ իրաւունք ունենամ, ձեզ ոչ թէ միայն ամուսնուց կը բաժանեմ, այլ և Սիբիր կաքսորեմ։

ՄԱՐԹԱ. ԿԱՏ. Ասում եմ խօսքս մի կըտրէք. մի խանգարէք։ Ես տաք բնաւորութեան տէր կին եմ։ (*Մտնում է Նազեանը*)։

ՆԱԶԵԱՆ. (*Ներս է մտնում լալով*)։ Պ. փաստաբան, ամուսինս ինձ տանից արտաքսեց, նա սենեակ մտաւ այն ժամանակ երբ Սաշան ինձ համբուրում էր... խնդրում եմ, պ. փաստաբան, օգնեցէք, ասացէք այսպիսի մի օրէնք, որի զօրութեամբ ամուսինս ինձ դարձեալ իւր մօտ ընդունի։

ՄԱՐԹԱ. ԿԱՏ. Ինչպէս, ամուսինը ձեզ

տանից արտաքսեց. յետոյ, ինչու թոյլ տուիք, ինչու ձեզ այն տեղ դրիք որ նա համարձակուեց ձեզ տանից վռնդել։ Տիկին, դուք ոչ թէ կին, այլ լոբի և հնդուհաւ էք եղել։ Ի՞նչ վայել բան է լաց լինել։

ՆԱԶԵԱՆ. (*Լալով*)։ Պ. փաստաբան, ես շատ անփորձ եմ և այս կնոջ նման կատաղի չեմ, ես բոլորովին անփորձ եմ, ոչ օրէնք գիտեմ և ոչ միջոց։ Ի սէր Աստուծոյ, օգնեցէք, հաշտեցրէք ինձ ամուսնուս հետ։

ԲԱԺԱՆ. Մեծաւ ուրախութեամբ, ձեր տուն կը գամ և այնտեղ խօսենք, այնտեղ ձեզ խորհուրդ կը տամ և միջոց կը սովորեցնեմ։

ՆԱԶԵԱՆ։ Շատ կը պարտաւորեցնէք։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. Իսկ ինձ տալիս էք իմ մարդուս թէ ոչ։

ՇԼՕՐԵԱՆ. (*Ցոյց է տալիս Պողոսի վրայ*)։ Ահա այս էլ ձեր մարդը, ուզում էք կուլ տուէք, միայն թէ հեռացէք գլխից։

ՄԱՐԹԱ ԿԱՏ. (*Տեսնում է մարդուն*)։ Ա՜յ դու յիմար-հնդուհաւ, այստեղ ես եղել, հա՛, այս լոպէին եկ իմ ետևից։

ԶԱՐՈՒԻԱՆՈՎ. (*Ցանկարծ ներս է վազում*)։ Վերջացաւ և հանգաւ։ Շաբաշ։

ԱՄԵՆՔԸ. (*Զարմացած*)։ Ի՞նչ բան է։

ԶԱՐՈՒԻ. Վերջացաւ, շաբաշ, ամեն բան վերջացաւ, կնոջս հանդերձեալ աշխարհ ուղարկեցի։

ԱՄԵՆՔԸ. (*Զարմացած*)։ Ինչպէ՞ս։

ԶԱՐՈՒԻ. Ինչպէս և ահա այսպէս. կըտուրի վրայ լուացք էր փռում, թագուն ետևից մօտեցայ, ձեռքով բոթեցի, վերևից ցած ընկաւ և ամբողջ մարմնով ջարդուփշուր եղաւ։ (*Կանայք աղաղակ են բարձրացնում։ Միւսները զարմացած մնում են*)։ Պ. փաստաբան, այժմ ինձ պիտի օգնէք և դատարանի առաջ արդարացնէք։

ԲԱԺԱՆ. (*Վախեցած*)։ Ե՞ս։

ԶԱՐՈՒԻ. Այո՛, դուք։

ԲԱԼԹԻԿ. (*Գլուխը ներս է կոխում*)։ Ներողութիւն, պարոններ, կնոջս հօ չէք տեսել։ (*Ծածկւում է։ Պատկերը*)։

ԲԱԺԱՆ. (*Նրա ետևից գրքեր է շպրտում*)։ Կորիր ախմախ անասուն։ Դու էիր պակաս։

ՎԱՐԱԳՈՅՐ

Հայ. Գրաբարի Ինստիտուտ
Ազգային Գրադարան
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան
Ազգային Գրադարան
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան
Ազգային Գրադարան
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան